ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 111 -Ա

« 02 » ՄԱՅԻՍ 2022Թ.

«ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԷՄՄԱ ՀԱՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի 1-մասի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրին համապատասխան Տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի մասնագետների կողմից ՀՀ Վայոց ձորի մարզում գործող պետական բժշկական հաստատություններում իրականացված հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում արձանագրված խախտումները, «Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 27-րդ կետի 1-ին, 4-րդ կետերը և հաշվի առնելով «Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Է.Հանիսյանի 26.04.2022թ. և 02.05.2022թ. գրավոր բացատրությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար «Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Էմմա Հանիսյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով Է.Հանիսյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր